

«Նախագծերի կառավարում» մագիստրոսական ծրագիր

Ընդհանուր տեղեկություն

«Նախագծերի կառավարում» (Project Management) ծրագրի հիմքը դրվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի և Վալենսիայի պոլիտեխնիկական համալսարանի միջև 04.04.2017թ. և 01.06.2017թ. համագործակցության պայմանագրերի, ինչպես նաև Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ու Ճարտարապետության և շինարարության հայաստանի ազգային համալսարանի միջև 07.09.2017թ. համաձայնագրի ստորագրմամբ:

Այսօր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը (ՀՊՏՀ), Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը (ՃՀՀԱՀ), Վալենսիայի պոլիտեխնիկական համալսարանը (ՎՊՀ, Իսպանիա) և Բոլոնիայի համալսարանի (Իտալիա) Ռիմինիի մասնաճյուղը շարունակում են իրականացնել զբոսաշրջության, մշակութային ժառանգության կառավարման և երկրատեղեկատվական համակարգերի ոլորտներում «Նախագծերի կառավարում» մագիստրոսական համատեղ կրթական ծրագիրը՝ մեկտեղելով տնտեսագիտական և կառավարման իմացությունը տեխնիկական գիտելիքի ու հմտությունների հետ:

Կրթական ծրագրի նպատակն է պատրաստել բարձրակարգ մասնագետներ, որոնք զբոսաշրջության, մշակութային ժառանգության կառավարման և երկրատեղեկատվական համակարգերի ոլորտներում ունակ կլինեն կազմակերպելու նախագծեր, ընդունելու դրանց ռեսուրսային և կազմակերպական ապահովման հետ կապված արդյունավետ կառավարչական որոշումներ, ինտեգրելու նորարարական և ներդրումային գործընթացները հանուն կայուն զարգացման: Ծրագրի կարևոր առանձնահատկությունն այն է, որ սովորողները ունակություններ են ձեռք բերում նշված ոլորտներում նախագծերի մոդելավորման, ներդրումային գործընթացների և ռիսկերի գնահատման ասպարեզներում, ինչը լավ նախադրյալներ է ստեղծում ոչ միայն կիրառական, այլև գիտական գործունեության համար:

Մասնագիտության նկարագիր

Համատեղ կրթական ծրագիրը ձևավորող հիմնական դասընթացներն են՝

- Նախագծի բովանդակության կառավարում
- Մշակութային և բնական ժառանգության երթուղիներ
- Ռազմավարական կառավարում
- Նախագծի ժամանակացույցի կազմում և ծախսերի պլանավորում
- Ռիսկերի կառավարում

- Նախագծի որակի կառավարում
- Հայկական ճարտարապետություն. Աշխարհագրություն և ժամանակակից միտումներ
- Զբոսաշրջության սկզբունքներ և պլանավորում
- Զբոսաշրջային վայրերի մարքեթինգ
- Զբոսաշրջային արտադրանքի մշակում և առաջնդում
- Էկոտուրիզմի կառավարում
- Մշակութային ժառանգությունը զբոսաշրջության ոլորտում. Ցուցադրում և պահպանում
- Երկրատեղեկատվական համակարգերի (ԵՏՀ) հիմունքներ
- Գեոդեզիական ժամանակակից սարքավորումներ, լազերային սքանավորում և եռաչափ մոդելավորում
- Երկրատեղեկատվական համակարգերի (ԵՏՀ) կիրառում
- Հեռահար զոնդավորում
- Ֆոտոգրամետրիա և թվային պատկերների մշակում
- Մշակութային ժառանգության ռեսուրսների 3D մոդելավորում
- Զբոսաշրջության կայուն զարգացում
- Ձեռնարկատիրություն և բիզնեսի զարգացում
- Ստարտափերի մարքեթինգ

Կան նաև ընտրովի վեց դասընթացներ, որոնց ցանկն անհրաժեշտության դեպքում կարող է ընդլայնվել:

Կրթական ծրագրի պատասխանատուն ՀՊՏՀ կոմերցիայի և բիզնեսի կազմակերպման ամբիոնն է:

Համաձայն ընդունելության պահանջների՝ համատեղ կրթական ծրագրի ընդունելությունը կատարվում է մրցութային կարգով՝ հարցազրույցի միջոցով, որի ժամանակ ստուգվում է նաև դիմորդի անգլերենի իմացությունը: Մրցույթին կարող են մասնակցել ՀՊՏՀ և հայաստանյան այլ բուհերի առնվազն բակալավրի որակավորում ունեցող շրջանավարտները, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիները: Անվճար մրցույթին կարող են մասնակցել 2019-2020 ուսումնական տարվա ՀՊՏՀ այն շրջանավարտները, որոնց միջին որակական գնահատականը (ՄՈԳ) բավարարում է ՀՊՏՀ մագիստրատուրա անվճար ընդունելության պահանջներին:

Ուսումնառության տևողությունը 2 տարի է, ձևը՝ առկա (ցերեկային), իսկ լեզուն՝ հայերեն, անգլերեն: Ուսման տարեկան վարձը՝ 620 հազար դրամ:

Ուսումնառության առաջին տարում ուսանողները կսովորեն ՀՊՏՀ-ում և ՃՇՀԱՀ-ում՝ իրենց կարգավիճակով (անվճար կամ վճարովի), իսկ երկրորդ տարում՝ ՎՊՀ-ում՝ Բոլոնիայի համալսարանի (Իտալիա) Ռիմինիի մասնաճյուղում հետզոտական փորձառություն անցնելու հնարավորությամբ:

Վալենսիայի պոլիտեխնիկական համալսարանում ուսումը շարունակելու համար դիմորդները պետք է տիրապետեն անգլերենին, քանի որ բոլոր դասընթացները

կազմակերպվելու են բացառապես անգլերենով: ՎՊՀ կողմից շնորհվող որակավորում (դիպլոմ) ստանալու համար ուսանողները կրթական ծրագրով նախատեսված կրեդիտների (120 ԿՓԿՀ) առնվազն 40%-ը (48 ԿՓԿՀ) պետք է կուտակեն ՎՊՀ-ում և մագիստրոսական թեզը պաշտպանեն Վալենսիայում: Մեկ կրեդիտի արժեքը Վալենսիայում ուսումնառության ընթացքում, կախված դասընթացի առանձնահատկությունից, կազմում է 30-55 եվրո:

Հայաստանում և Իսպանիայում ուսումնառության հաջող ավարտի դեպքում մագիստրոսական համատեղ կրթական ծրագրի ուսանողները կստանան մագիստրոսի որակավորման երկու դիպլոմ՝ ՀՊՏՀ և ՃՇՀԱՀ համատեղ դիպլոմ և ՎՊՀ դիպլոմ:

Մագիստրոսական կրթական ծրագիրը իրականացվում է գործընկերների հետ սերտ համագործակցությամբ, փորձառու պրոֆեսորադասախոսական անձնակազմի ու ոլորտի գործող մասնագետների ներգրավմամբ և նորագույն դասավանդման մեթոդների կիրառմամբ:

Աշխատանքի հնարավորություններ

Ընդհանուր առմամբ, կրթական ծրագրի շրջանավարտները ձեռք կբերեն որոշակի կարողություններ և հմտություններ՝

- ղեկավարելու տարբեր բիզնես նախագծերի գործընթացներ և ամբողջական նախագծեր, այդ թվում՝ փոփոխությունների և անորոշության պայմաններում,
- ղեկավարելու նախագծային բիզնես միավորներ,
- ղեկավարելու առանձին բիզնես միավորի նախագծային և գործընթացային գործունեությունը, գնահատելու և իրագործելու շուկայական հնարավորությունները, կառավարելու նյութական և ֆինանսական հոսքերը, ինչպես նաև գործունեության հավանական ռիսկերը,
- կառավարելու նախագծային առանձին բիզնես միավորի գործունեության ռազմավարական փոփոխությունները, մշակելու գործունեության նոր ուղղություններ և դրանց համապատասխան բիզնես մոդելներ,
- ինքնուրույն ընդունելու կազմակերպական և կառավարչական որոշումներ, գնահատելու դրանց արդյունավետությունն ու սոցիալական նշանակությունը:

Հաշվի առնելով այս ծրագրի առանձնահատկությունները՝ շրջանավարտները հնարավորություն կունենան աշխատելու որպես նախագծերի կառավարիչներ ինչպես զբոսաշրջության և մշակութային ժառանգության կառավարման, այնպես էլ երկրատեղեկատվական համակարգերի կիրառման ոլորտներում: Ըստ որում, նրանց ստացած երկու որակավորումները (դիպլոմները) հանարավորություն կընձեռեն աշխատելու թե՛ Հայաստանի, թե՛ Եվրոպայի աշխատաշուկայում: